ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՏԻԳՐԱՆ ԿԱՐԵՆԻ ՍԻՄՈՆՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԻԳ 00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2025

RUSSIAN-ARMENIAN UNIVERSITY

INSTITUTE OF INTERNATIONAL RELATIONS AND SOCIO-POLITICAL SCIENCE

TIGRAN KAREN SIMONYAN

ISSUES OF PARLIAMENTARY GOVERNANCE DEVELOPMENT IN THE CONTEXT OF NATIONAL SECURITY CHALLENGES USING THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA

for the degree of candidate of sciences (Ph.D.)
in the specialty 23.00.02 “Political Institutions and Processes”

SUMMARY

YEREVAN – 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ-Ռուսական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

իրավաբանական գիտությունների դոկտոր,
քաղաքական գիտությունների թեկնածու **Հարությունյան Արմեն Ռուբիկի**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ալեքսանյան Աշոտ Սեյրանի**
քաղաքական գիտությունների թեկնածու, ասիստենտ **Խոջայան Կարինե Գագիկի**

Առաջատար կազմակերպություն՝ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2025 թվականի նոյեմբերի 5-ին, ժամը 14:30-ին ԵՊՀ-ում գործող ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ»> 056 մասնագիտական խորհրդում:
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում:

Սեղմագիրը առաքվել է 2025 թվականի հոկտեմբերի 2-ին:

ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի 056 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, քաղաքական
գիտությունների թեկնածու, դոցենտ **Սարգսյան Առնակ Գեորգիի**

The dissertation topic has been approved at the Russian-Armenian University.

Scientific Supervisor:

Doctor of Law, Candidate of Political Sciences **Armen Rubik Harutyunyan**

Official opponents:

Doctor of political sciences, Professor **Ashot Seyran Aleksanyan**
Candidate of political sciences, assistant **Karine Gagik Khojayan**

Leading organization: V. Brusov State University

Dissertation under 23.00.02 – “Political Institutions and Processes,” aspiring to earn Ph.D. in Political Sciences. The defense of the dissertation will take place on November 5, 2025 at 14:30 at the Specialized Council 056 "Political Sciences and International Relations" of the RA MOESCS HESC, operating at Yerevan State University (Address: RA, Yerevan, 0025, 1 Alex Manoogian).
The dissertation is available for review at the Sarkis and Mari Izmirlyan Library of Yerevan State University.
The abstract was sent out on October 2, 2025 at.

Scientific Secretary of the Specialized Council,
056 MOESCS HESC
Candidate of Political Sciences, Associate Professor **Arnak Georgi Sargsyan**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը:

Ժողովրդավարությունը զարգացել է դարերի ընթացքում՝ սկիզբ առնելով Հին Հունաստանից և ժամանակի ընթացքում տարածվելով ողջ աշխարհում և հաշվի առնելով ժամանակակից աշխարհակարգի բարդությունն ու բազմազանությունը, ժողովրդավարական միտումները դեռ շարունակում են ծառայել որպես զարգացման հիմնարար շարժիչ ուժ: Ժողովրդավարական հասարակությունում ապրելը խթանում է կառավարման հաշվետվողականությունն ու թափանցիկությունը՝ օգնելով կանխել իշխանության չարաշահումը: Սա առանձնահատուկ նշանակություն ունի ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների համար, որոնք ձգտում են կառուցել լիարժեք ժողովրդավարական ինստիտուտներ՝ միևնույն ժամանակ հաշվի առնելով իրենց ազգային առանձնահատկություններն ու իրավաքաղաքական մշակույթը: Այս համատեքստում ընտրովի բարձրագույն պետական իշխանությունների ձևավորումը ստանում է հիմնարար նշանակություն: Ազատ և ժողովրդավարական ընտրությունները, որոնք կարևոր դեր են խաղացել հնագույն ժամանակներից սկսած առ այսօր, անկյունաքարային նշանակություն ունեն ոչ միայն խորհրդարանների, այլ նաև հանրային իշխանության բոլոր ընտրովի մարմինների ձևավորման գործընթացում: Սակայն սա չի նշանակում, որ ժողովրդավարական հիմունքներով ձևավորված պետական իշխանությունները լիովին բացառում են ոչ ժողովրդավարական գործիքակազմերի կիրառումը իրենց գործունեության ընթացքում: Կայուն ժողովրդավարության հաստատման գործընթացում հիմնարար նշանակություն ունեն խոհրդարանական ընտրությունները և որպես արդյունք խորհրդարանների անցնցում ձևավորումը և գործունեության ապահովումը: Այս տեսանկյունից, խորհրդարանը և խորհրդարանական կառավարումը ունեն առանձնահատուկ նշանակություն: Ատենախոսության մեջ արդի խորհրդարանների կարգավիճակին և գործունեությանը վերաբերող հիմնահարցերը ուսումնասիրվում են ժողովրդավարական և

ներկայացուցչական համակարգերի բնօրրան՝ Հին Հունաստանի և Հռոմի գործնական առանձնահատկությունների համատեքստում: Աթենքի ժողովը դիտվում է որպես ուղիղ ժողովրդավարության վրա ազդեցության կարևոր ինստիտուտ, մինչդեռ Հռոմեական Սենատը ներկայացվում է որպես ինստիտուցիոնալացված կոլեգիալ մարմին: Միևնույն ժամանակ, առանձնացվել է 1688 թվականի Պանծալի հեղափոխությունը, որը վճռական դեր է խաղացել խորհրդարանի գերակայության հաստատման և օրենսդիր իշխանության ինստիտուցիոնալացման գործում՝ որոշումների կայացման գործընթացում խորհրդարանի ներգրավվածության շնորհիվ: Վերջապես, Ֆրանսիական հեղափոխությունը ուսումնասիրվում և վերլուծվում է որպես ժամանակակից խորհրդարանական համակարգերի ձևավորման կարևոր փուլ, հատկապես Ազգային ժողովի ստեղծման և սահմանադրական կառավարման զարգացման ուղղությամբ իր նշանակալի ներդրման առումով: Աշխատությունում քննարկվում է նաև նշված պատմական իրադարձությունների ազդեցությունը ժամանակակից խորհրդարանական կառավարման մոդելների համատեքստում, հատկապես գործադիր և օրենսդիր ճյուղերի միջև իշխանությունների բաժանման տեսանկյունից: Խորհրդարանական համակարգի մանրակրկիտ վերլուծությունը նախ պահանջում է պարզել, թե ինչ է նշանակում« խորհրդարան, ինչպես է այն զարգացել ժամանակի ընթացքում և որ պատմական իրադարձություններ են կարևորապես ազդել դրա ձևավորման վրա: Խորհրդարանը հանդիսանում է պաշտոնական ներկայացուցիչների ժողով, որը պատասխանատու է օրենքների ընդունման, քաղաքական հարցերի քննարկման և գործադիր իշխանության գործունեության վերահսկման համար: Մինչդեռ խորհրդարանական կառավարումը խորը պատմական արմատներ ունի զարգացած արևմտյան ժողովրդավարություններում, զարգացող երկրներում: Հայաստանում այս կառավարման մոդելը դիտվում է որպես« վերադարձ ակունքներին՝ հատկապես 2015 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ խորհրդարանների ձևավորումը հիմնված է մի շարք սկզբունքների վրա, որոնցից առաջինը ներկայացուցչությունն է:

Հայկական խորհրդարանական համակարգի համատեքստում Բյորկի մոտեցումը բացում է նոր հեռանկարներ խնդրի վերլուծության և այն նոր տեսանկյունից հետազոտելու համար:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը:

Հետազոտության թեմայի վերաբերյալ կան որոշ աշխատանքներ, որոնք, սակայն, ամբողջովին չեն արտացոլում Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական կառավարման զարգացումը և մարտահրավերները: Առավելապես կենտրոնանալով անվտանգության սպառնալիքների (ներքին և արտաքին) ազդեցության վրա խորհրդարանական համակարգի գործունեության, զարգացման և օրինականության ոլորտներում, այս աշխատանքները չեն առաջարկում համապարփակ ռազմավարություններ՝ օրենսդիր մարմնի դիմադրողականության և ժողովրդավարական բնույթի արդյունավետ բարելավման ուղղությամբ՝ նպատակ ունենալով ապահովել համակարգի կայունություն և դիմակայություն ապագայում նմանատիպ մարտահրավերներին:

Առաջնահերթություն է տրվում այն գործոններին, որոնք նպաստում են ժողովրդավարական ինստիտուտների ձևավորմանը, անվտանգության ապահովմանը և կայուն զարգացման խթանմանը, որը մեծապես որոշվում է քաղաքական և իրավական համակարգի ինստիտուցիոնալ կառուցման և զարգացման գործընթացներով: Վերջին տասնամյակներում քաղաքական և իրավական համակարգերի վերափոխման ինստիտուցիոնալացման և անվտանգության հարցերի գործընթացները, մասնավորապես՝ քաղաքական և իրավական համակարգի ֆունկցիոնալ և համեմատական վերլուծության, հանրային իշխանության սահմանադրական մարմինների ձևավորման, սահմանադրականության հաստատման և պառլամենտարիզմի զարգացման միջոցով, լրջորեն ուսումնասիրվել են հայ գիտնականների կողմից: Այս հետազոտողները ուշադրություն են դարձրել տարբեր արժեքային և կառուցվածքային գործոնների՝ ընդգծելով քաղաքական և իրավական համակարգի ձևավորման և զարգացման դինամիկան էթնոքաղաքական ուսումնասիրությունների, ազգային անվտանգության և սահմանադրականության շրջանակներում: Բացի այդ, որոշ

գիտնականներ հակամարտությունների ուսումնասիրության և վերլուծության հետ մեկտեղ դիտարկում են խորհրդարանական կառավարման համակարգերի ձևավորման և ճանաչման բարդ գործընթացները՝ բազմաչափ տեսանկյունից: Միջազգային հետազոտողները նույնպես իրենց ներդրումն ունեն այս թեմայի ուսումնասիրության մեջ, մասնագիտանալով խորհրդարանական կառավարման ներքո քաղաքական համակարգերի զարգացման կառույցային ասպեկտների համակարգային ուսումնասիրություններում, նրանց աշխատանքները ընդգրկում են սոցիոլոգիայի, Եվրասիական քաղաքականության, անվտանգության և տարածաշրջանային ուսումնասիրությունների վերաբերյալ հարցեր: Չնայած ուսումնասիրվող խնդրի տարբեր ասպեկտների ուսումնասիրության լայնածավալ բազային՝ խորհրդարանական կառավարման ներքո բարձրագույն ընտրովի պետական մարմինների ձևավորման սահմանադրական, իրավական և հիմնարար խնդիրներին վերաբերող որոշ հարցեր դեռևս բավարար չափով ուսումնասիրված չեն: Քաղաքական համակարգերի ձևավորման և զարգացման ինստիտուցիոնալ ասպեկտների համակարգային ուսումնասիրությունների շրջանակում առանձնանում են մի շարք հեղինակավոր գիտնականներ՝ իրենց գիտական և ճանաչողական գործունեության շնորհիվ: Հայրենական հեղինակներից կարելի է առանձնացնել Գագիկ Հարությունյանի[1], Հենրիկ Խաչատրյանի[2], Մարիամ Մարգարյանի[3], Ֆելիքս Թոխյանի[4] և Հրայր Թովմասյանի[5] աշխատությունները: Միջազգային ասպարեզում

---

1 Հարութունյան Գ. Սահմանադրականության բաղադրիչները. իրավունքի գերակայություն, կայուն զարգացում // Սահմանադրական արդարադատություն // Նոր ժողովրդավարության երկրների սահմանադրական վերահսկողության մարմինների համաժողովի տեղեկագիր / Թողարկում 2(52)2011, ԵՐ.2011. – 119 էջ:

2 Խաչատրյան, Հ. 1994: Իշխանությունների տարանջատում և խորհրդարանականություն: Երևան «Արեգ» 1994: էջ 30-85

3 Մարգարյան Մ. Քաղաքական էլիտան և ժողովրդավարական անցման հարցերը Հայաստանի Հանրապետությունում: էջ 340-363:

4 Թոխյան Ֆ. Սիմոնյան Լ. Ընտրական գործընթացի հիմնական սուբյեկտների իրավական կարգավիճակը խորհրդարանական ընտրություններում:

5 Թովմասյան Հ. Օրենսդիր և գործադիր իշխանությունների փոխկախվածության առանձնահատկությունները կիսանախագահական հանրապետությունում՝ Ֆինլանդիայի Հանրապետության օրինակով: Թովմասյան Հ. Նախագահական կառավարման ձևի

ակնարկի արժանի են Ա. Լիփհարթը[6], Դալը,[7] Նավարոն[8],Շուգարտը[9], Փոլարդը,[10] Կացը[11] և այլ գիտնականներ: Այնուամենայնիվ, չնայած խնդրի մեծածավալ հետազոտական բազայի՝ պետական իշխանության բարձրագույն ընտրովի մարմինների ձևավորման ինստիտուցիոնալ, սահմանադրական և իրավական հիմնահարցերի որոշ ասպեկտներ մնում են ամբողջովին չուսումնասիրված:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական կառավարման մոդելի ներդրման և գործունեության ապահովման հիմնախնդիրներն են: Հետազոտության առարկան Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական կառավարման առանձնահատկություններն են՝ ազգային անվտանգության մարտահրավերների համատեքստում:

Հետազոտության նպատակը և խնդիրները:

Ատենախոսության հիմնական նպատակն է վերլուծել Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական կառավարման

ծագումը և զարգացումը, դրա բնութագրերը, պետական իշխանության կազմակերպման մոդելը նախագահական հանրապետությունում: Թովմասյան Հ. և Պողոսյան Վ. Հանրապետության նախագահի գործառույթների և լիազորությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները:

[6] Lijphart, A. (1999). Patterns of Democracy: Government Forms and Performance in Thirty-Six Countries. http://digamo.free.fr/lijphart99.pdf (Accessed on July 21, 2025).

[7] Dahl, R. (1998). On Democracy. Yale University Press https://newuniversityinexileconsortium.org/wp-content/uploads/2022/08/Robert-A.-Dahl-On-Democracy-1998-1.pdf (Accessed on July 21, 2025).

[8] Navarro, J. et all. (2012). Measuring parliamentary effectiveness in the French national assembly: The contribution of non-parametric frontier methods.

[9] Shugart, M. S., & Carey, J. M. (1992). Presidents and Assemblies and Parliamentarism: Constitutional Design and Electoral Dynamics https://archive.org/details/presidentsassemb0000shug (Accessed on July 21, 2025).

[10] 56. Pollard, A. (1926). The Evolution of the Parliament https://core.ac.uk/download/pdf/7048897.pdf (Accessed on July 21, 2025).

[11] Katz, R. & Meir, P. (1995). Changing Models of Party Organization and Party Democracy: The Emergence of the Cartel Party https://dl1.cuni.cz/pluginfile.php/1783574/mod_resource/content/1/Katz_Mair_Changing%20Models%20of%20Party%20Organization%20and%20Party%20Democracy.pdf (Accessed on July 21, 2025).

զարգացումը և մարտահրավերները՝ կենտրոնանալով, թե ինչպես են անվտանգային սպառնալիքները (ներքին և արտաքին) ազդում խորհրդարանական համակարգի գործունեության և զարգացման վրա: Միևնույն ժամանակ, աշխատանքը նպատակ ունի մշակել ռազմավարություններ՝ օրենսդիր մարմնի դիմադրողականությունն ու ժողովրդավարական բնույթը բարելավելու՝ ապագայում այս կամ նմանատիպ մարտահրավերներին արդյունավետ դիմակայելու համար: Այս նպատակներն իրագործելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- **Ուսումնասիրել** խորհրդարանների և խորհրդարանական կառավարման մոդելի կայացման և զարգացման միջազգային փորձը:
- **Ուսումնասիրել** Հայաստանում խորհրդարանական կառավարման պատմական և ինստիտուցիոնալ զարգացման գործընթացը՝ հետևելով Ազգային ժողովի կառուցվածքային և ընթացակարգային զարգացմանը անկախությունից ի վեր:
- **Բացահայտել** հիմնական անվտանգային մարտահրավերները (տարածաշրջանային հակամարտություններ, աշխարհաքաղաքական լարվածություն, ներքաղաքական դժգոհություններ), որոնք ազդում են Հայաստանի Հանրապետության վրա և կարող են որոշակի ազդեցություն ունենալ օրենսդրական գործընթացների վրա:
- **Վերլուծել** անվտանգության հետ կապված քաղաքականության և խորհրդարանական որոշումների կայացման փոխազդեցությունը:
- **Գնահատել** կուսակցությունների, կոալիցիաների և ընդդիմության դերը անվտանգությանն առնչվող պայմաններում:
- **Գնահատել** խորհրդարանի լեգիտիմությունն և հանրային վստահությունն արտակարգ և ճգնաժամային իրավիճակների պայմաններում:
- **Ուսումնասիրել** նմանատիպ կառավարման մոդելներ ունեցող և համանման անվտանգային մարտահրավերների առջև կանգնած այլ պետությունների փորձը՝ հայկական համատեքստում կիրառելի դասեր քաղելու նպատակով:

- **Կենտրոնացնել** հետազոտությունն անցումային ժողովրդավարության վրա՝ ազգային անվտանգության մարտահրավերների համատեքստում:
- **Մանրամասն վերլուծել** օրենսդրական գործընթացները, կուսակցական և ինստիտուցիոնալ լեգիտիմության դինամիկան:
- **Մշակել** նոր տեսական մոտեցումներ խորհրդարանական կառավարման ուսումնասիրության համար՝ ազգային անվտանգության սպառնալիքների համատեքստում:
- **Մշակել** խորհրդարանական կառավարման համընդհանուր մոտեցում՝ Հայաստանի Հանրապետության օրինակով՝ ազգային անվտանգության մարտահրավերների համատեքստում համեմատության նպատակով:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության նպատակներով և խնդիրներով պայմանավորված՝ կիրառվել են համընդհանուր ճանաչողության (դիալեկտիկական, պատմական, տրամաբանական), ընդհանուր գիտական ճանաչողության (անալիզ, համակարգային, կառուցվածքային վերլուծություն) և քաղաքագիտության հատուկ մեթոդներ (ինստիտուցիոնալ և ռացիոնալ ընտրության մեթոդները): Վերոնշյալ խնդիրները լուծելու համար օգտագործվել են պատմա-համեմատական, արժեքային և համակարգա-համեմատական մոտեցումներ: Աշխատության առաջին և վերջին հատվածներում առանձնապես օգտագործվել է պատմական ինստիտուցիոնալիզմի մոտեցումը, որը և հիմք է հանդիսացել ուսումնասիրել պառլամենատրիզմի գոյացումը և զարգացումը որպես կառավարման մոդել: Առաջին չորս ենթագլուխներում հատուկ ուշադրություն է դարձվել խորհրդարանական կառավարման մոդելի պատմական զարգացման դինամիկային և ինստիտուցիոնալիզմի պրիզմայի ներքո վերլուծվել է ինչպես և ինչ պայմաններում և մարտահրավերների համատեքստում է առաջացել խորհրադարանական կառավարման մոդելը: Միևնույն ժամանակ, աշխատության երկրորդ գլխում կիրառվել է համեմատական վերլուծություն պարզելու համար, թե ինչ մոտեցումներ են կիրառվում խորհրդարանական կառավարման մոդել ունեցող երկրների կողմից ազգային անվտանգային և արտակարագ իրավիճակները հաղթահարելու համար: Ի վերջո, երրորդ գլխում կրկին կիրառվել է պատմական ինստիտուցիոնալիզմի և

քաղաքական մշակույթի տեսությունը ուսումնասիրելու համար թե ինչ պատմաքաղաքական պայմաններում է ձևավորվել և շարունակում զարգանալ խորհրդարանական կառավարման մոդելը Հայաստանի Հանրապետությունում:

Հետազոտության գիտական նորույթը: Հետազոտության գիտական նորույթն այն է, որ խորհրդարանական կառավարման, որպես համակարգի, նորարարական ուսումնասիրության մեջ՝ անվտանգության մարտահրավերների տեսանկյունից, որը քաղաքագիտական գրականության մեջ թերուսումնասիրված է: Կենտրոնանալով հայկական համատեքստի վրա, որը բնութագրվում է տարածաշրջանային ինարավոր հակամարտություններով, աշխարհաքաղաքական ճնշումներով և ներքին քաղաքական անկայունությամբ, առաջարկում է նոր մոտեցում, որը նպատակ ունի ինտեգրել ինստիտուցիոնալ վերլուծությունը, անվտանգության ուսումնասիրությունները և ժողովրդավարության տեսությունը: Ատենախոսությունը նորարարական կերպով համապատասխանեցնում է խորհրդարանական կառավարման հաստատված մոդելները ազգային անվտանգության սպառնալիքի տակ գտնվող անցումային ժողովրդավարությանը՝ առաջարկելով պատկերացում այն մասին, թե ինչպես են նման պայմանները ձևավորում օրենսդրական արդյունավետությունը, կոալիցիոն դինամիկան և հանրային լեգիտիմությունը: Ավելին, ուսումնասիրությունը ներկայացնում է ինքնատիպ փորձարարական տվյալներ՝ Հայաստանի խորհրդարանի ճգնաժամերին արձագանքի ուսումնասիրության միջոցով, համեմատական դասեր առաջարկելով այլ հետխորհրդային կամ հակամարտությունից տուժած պետությունների համար և առաջարկելով ժողովրդավարական դիմադրողականության բարձրացման հատուկ ռազմավարություններ, որոնք ներկայացված են ժամանակակից գիտական աշխատությունների մեջ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ՝

- ՀՀ-ում խորհրդարանական կառավարման մոդելը չի դիտարկվում որպես կառավարման մոդելի փոփոխություն, այլ՝ որպես վերադարձ ակունքներին անկախության հռչակագրի համատեքստում:
- Հետազոտությունը կենտրոնանում է անցումային ժողովրդավարության վրա՝ անվտանգային զգալի մարտահրավերների պայմաններում ժողովրդավարական ինստիտուտների կայացման և զարգացման հեռանկարի վրա:

- Աշխատությունը ներկայացնում է տեսական մոդելներ, որոնք ուղղակիորեն կապում են անվտանգային սպառնալիքները խորհրդարանական կառավարման հետ: Մասնավորապես, վերլուծվում է, թե ինչպես են անվտանգային ճգնաժամերը ազդում օրենսդրական արդյունավետության, կոալիցիաների ձևավորման գործընթացների և օրենսդիրների նկատմամբ հանրային վստահության մակարդակի վրա:
- Թեև հետազոտությունը կենտրոնացած է Հայաստանի վրա, այն ոչ կոնյուկտուրային բնույթ ունի և կարող է մոդելավորել նմանատիպ անվտանգային միջավայրում գտնվող մի շարք այլ պետությունների դեպքում:
- Զարգացող երկրներում խորհրդարանական կառավարման մոդելը ուսումնասիրվում է գործադիր և օրենսդիր իշխանության ճյուղերի նույնացման հնարավոր վտանգների լույսի ներքո:

Հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը: Ատենախոսության գիտատեսական նշանակությունը այն է, որ համակողմանի վերլուծության է ենթարկվել 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում կառավարման մոդելի փոփոխությունը: Ինչպես նաև ատենախոսությունն ունի գիտական և տեսական մեծ նշանակություն, քանի որ այն տրամադրում է խորացված վերլուծություն, թե ինչպես է Հայաստանում կառավարման մոդելի փոփոխությունը ազդել անվտանգային մարտահրավերներին դիմակայելու կարողության վրա: Ուսումնասիրությունը կենտրոնանում է խորհրդարանական և ժողովրդավարական վերահսկողությունների, ինչպես նաև անվտանգության ոլորտի բարեփոխումների փոխազդեցության վրա՝ Հայաստանի առջև ծառացած հակամարտությունների և մարտահրավերների համատեքստում:

Հետազոտության կիրառական նշանակությունը կարևորվում է նրանով, որ ատենախոսության մեջ կատարված վերլուծությունները, դրանց հիման վրա արված եզրահանգումները և գիտականորեն հիմնավորված քաղաքագիտական լուծումները կարող են կիրառվել խորհրդարանական կառավարման վերաբերյալ մոդելի ուսումնասիրության կատարելագործման նպատակով: Ատենախոսությունը կարող է հիմք հանդիսանալ նաև ուսումնական, մեթոդաբանական և գիտական գրականության մշակման ժամանակ:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնադրույթները և ուսումնասիրության արդյունքները քննարկվել են Հայ-Ռուսական

համալսարանի միջազգային հարաբերությունների և հասարակաքաղաքական գիտությունների ինստիտուտի Կ.Ա. Միրումյանի անվան <<Քաղաքագիտության>> ամբիոնում: Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի կողմից ներկայացված 7 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ ութ ենթագլուխներով, եզրակացությունից, վերջաբանից, օգտագործված գրականության ցանկից: Թեկնածուական ատենախոսության տեքստային ծավալը, ներառյալ օգտագործված գրականության ցանկը՝ կազմում է 108 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, գիտական մշակվածության աստիճանը, ատենախոսական աշխատանքի մեթոդաբանական հիմքերը և գիտական նորույթը, ձևակերպվել են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հիմնավորվել է հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության՝ **<<Խորհրդարանական կառավարումը որպես համեմատական քաղաքագիտության օբյեկտ>>** խորագրով առաջին գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից:

<<Խորհրդարանական կառավարման ուսումնասիրության տեսամեթոդաբանական որոշ հիմնախնդիրները>> խորագրով առաջին ենթագլխում քննարկվել է, թե ինչպես են քաղաքական համակարգերը, կուսակցությունների դինամիկան և ինստիտուցիոնալ շրջանակները ազդում խորհրդարանական արդյունավետության ընկալման և գնահատման վրա: Ընդգծվել են օրենսդրական գործընթացի բարդությունները, արտախորհրդարանական գործառույթների, հաճախ որակական և դժվար չափելի բնույթը, ինչպես նաև միայն քանակական ցուցանիշների վրա հիմնվելու սահմանափակումները: Ատենախոսությունը վերլուծում է կուսակցական համակարգերի, կուսակցական կարգապահության, ՀԼՄ-ների ազդեցության և հասարակական կարծիքի դերը խորհրդարանական կառավարման գործունեության և ընկալման ձևավորման գործում: Միևնույն ժամանակ ընդգծվում է, որ համընդհանուր գնահատման շրջանակի մշակումը դժվարանում է սահմանումների

տարբերությունների, քաղաքական հանգամանքների և արտաքին գործոնների պատճառով, ինչը պահանջում է համատեքստային և բազմաչափ մոտեցում:

<<Խորհրդարանական կառավարման կառուցվածքային ու ֆունկցիոնալ առանձնահատկությունները>> վերտառությամբ երկրորդ ենթագլխում ներկայացվել է խորհրդարանական կառավարման պատմական զարգացումը՝ սկսած Աթենքի Ժողովից և Հռոմեական Սենատի հնագույն մոդելներից մինչև վաղ ժամանակակից խորհրդարանների ձևավորումը և նրանց ֆունկցիոնալ զարգացման առանձնահատկությունները՝ հատկապես Անգլիայում և Ֆրանսիայում, որոնք ունեցել են մեծ ազդեցություն ժամանակակից խորհրդարանների կառուցվածքային և ֆունկցիոնալ առանձնահատկությունների վրա: Աթենքի Ժողովը իբրև խորհրդարանի նախատիպ ներկայացվել է քաղաքացիների անմիջական մասնակցության, օրենսդրական քննարկման և ժողովրդական կամքի գերակայության սկզբունքների ներդրման գործում կարևոր ինստիտուտ, մինչդեռ Հռոմեական Սենատը ներկայացվել է որպես անցում դեպի ավելի արիստոկրատական և կոլեգիալ կառավարման մոդել: Այնուհետև ուշադրություն է դարձվել Անգլիական հեղափոխության փոխակերպող ազդեցությանը, որի արդյունքում հիմնադրվել է սահմանադրական միապետությունը և ամրագրվել խորհրդարանական իրավունքների սկզբունքները: Մինչդեռ Ֆրանսիական հեղափոխությունը ներկայացվել է որպես քաղաքական կառուցվածքային արմատական փոփոխությունների գլխավոր պատճառ, որի արդյունքում հռչակվել է ժողովրդական ինքնիշխանությունը, և ընդունվել հիմնարար իրավունքների փաթեթ, հաստատվել օրենսդիր մարմնի գերակայությունը՝ որպես հանրապետության հիմք: Այս ենթագլխում ընդգծվել է, որ նմանատիպ զարգացումներից յուրաքանչյուրը նպաստել է հիմնարար գաղափարների ձևավորմանը՝ ինչպիսիք են ներկայացուցչական մասնակցությունը, հակակշիռներն ու զսպումները, օրենքի գերակայությունը և ժողովրդավարական արժանիքների վրա հիմնված առաջնորդությունը, որոնք խորապես ազդել են ժամանակակից խորհրդարանական համակարգերի կառուցվածքի և գործառույթների վրա: Խորհրդարանների և խորհրդարանական կառավարման մոդելի զարգացման պատմությունը ուսումնասիրվել է՝ ցույց տալու համար, թե ինչպես են փոխվել այս ինստիտուտի գործառույթները, պատասխանատվության շրջանակները և լիազորությունները:

<<Խորհրդարանական կառավարման ազգային անվտանգային գործառույթները>> խորագրով երրորդ ենթագլխում ներկայացվել են խորհրդարանական համակարգերի հիմնական առանձնահատկությունները՝ ներառյալ գործադիր և օրենսդիր ճյուղերի դե ֆակտո միաձուլման վտանգները, կառավարման մեծամասնության և կոնսենսուսային մոդելները, վարչապետի դերը, հաշվետվողականության մեխանիզմները՝ ինչպիսիք են անվստահության քվեն և կոալիցիոն դինամիկայից ծագող մարտահրավերները: Ենթագլխում նաև ընգծվել են խորհրդարանական կառավարման հիմքում ընկած իրավական սկզբունքները, անվտանգության և քաղաքացիական իրավունքների միջև հավասարակշռությունը, ինչպես նաև ազգային անվտանգության վերահսկողությունը, որի համատեքստում ներկայացվել է, թե ինչ դեր է ստանձնում խորհրդարանական կառավարումը քաղաքական կայունության, ներկայացուցչության և հաշվետվողականության ապահովման համատեքստում:

<<Խորհրդարանները և ազգային անվտանգությունը ժողովրդավարական համակարգերում վերահսկողություն, օրենսդրություն և քաղաքացիական ազատությունների մարտահրավեր>> խորագրով չորրորդ ենթագլխում ներկայացված են անվտանգության և ժողովրդավարության միջև բարդ և հաճախ հակասական փոխհարաբերությունները քաղաքական տեսության շրջանակում: Միևնույն ժամանակ անդրադարձ է կատարվել անվտանգության՝ լիբերալ ժողովրդավարական ընկալումներին՝ որպես միջոց ժողովրդավարական իրավունքների և հանրային բարրորության պաշտպանության համար: Ենթագլխում նաև անդրարձ է կատարվել անվտանգության և ազատության միջև տեսական լարվածությանը՝ ընդգծելով արտակարգ լիազորությունների շուրջ ընթացող բանավեճերը, գործադիր իշխանության կողմից արտակարգ իրավիճակներում իշխանության համախմբման ռիսկերը և հակակշիռների և զսպումների կարևորությունը՝ չարաշահումներից խուսափելու համար: Միացյալ Թագավորության և ԱՄՆ-ի օրինակները պատկերում են խորհրդարանական վերահսկողության զարգացումը անվտանգային ոլորտում՝ սկսած միապետական իշխանության սահմանափակումներից մինչև ժամանակակից պայմաններում ռազմական, հետախուզական և արտաքին քաղաքականության ոլորտներում կայացվող որոշումների նկատմամբ խորհրդարանական մշտադիտարկում: Ենթագլխում վերլուծվում է նաև խորհրդարանական մասնագիտացված հանձնաժողովների դերը, օրենսդիր մարմնի ընդլայնվող

մասնակցությունը պաշտպանության, հակաահաբեկչության և կիբերանվտանգության ոլորտներում, ինչպես նաև միջազգային համագործակցության ազդեցությունը ազգային անվտանգային քաղաքականությունների վրա:

Ատենախոսության՝ <<**Խորհրդարանի դերը ազգային անվտանգային մարտահրավերների համատեքստում**>> խորագրով երկրորդ գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

<<**Հայաստանի ազգային անվտանգության մարտահրավերները ԽՍՀՄ փլուզման համատեքստում**>> առաջին ենթագլխում ուսումնասիրվել և վերլուծվել է 1988 թվականին Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու համար սկսված Ղարաբաղյան շարժման զարգացումը և հետևանքները: Միևնույն ժամանակ ենթագլխում ուսումնասիրվել է, թե ինչպես են Ղարաբաղյան շարժումը և դրան հետևող Արցախյան ազատամարտը խորապես ազդել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հայեցակարգերի և քաղաքականության վրա: Ենթագլխում նշված են տարածքային փոփոխությունների ազդեցությունը, արտաքին դերակատարների (հատկապես Ռուսաստանի և Արևմուտքի) փոփոխվող ներգրավվածությունը, ինչպես նաև շարունակական անվտանգային սպառնալիքները՝ որպես Հայաստանի համար կառուցվածքային ռազմական, սոցիալական և քաղաքական հետևանքներ ունեցող գործոններ:

<<**Խորհրդարանի դերը ազգային անվտանգային մարտահրավերների համատեքստում (Վրաստանի, Ադրբեջանի և Իսրայելի օրինակները)**>> վերտառությամբ երկրորդ ենթագլխում ուսումնասիրվել են Ադրբեջանում և Վրաստանում գոյություն ունեցող ներքին և արտաքին անվտանգային խնդիրները՝ հատուկ ուշադրություն դարձնելով խորհրդարանական կառավարման և ազգային անվտանգության փոխազդեցությանը: Միաժամանակ, ենթագլխում մատնանշվել է, որ 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո ստեղծված քաղաքական ճգնաժամը և դրան հաջորդած բարեփոխումների քննարկումները, ընդգծեցին, որ անվտանգային հարցերում խորհրդարանի ազդեցությունը սահմանափակ է և հիմնականում որոշումները կայացնում է գործադիր իշխանությունը: Ադրբեջանի ավտորիտար համակարգում խորհրդարանը գրեթե զուրկ է իրական ազդեցությունից, քանի որ անվտանգային ամբողջ քաղաքականությունը խստորեն վերահսկվում է գործադիր իշխանության կողմից: Վրաստանում խորհրդարանական համակարգը թուլացած է

իշխող կուսակցության գերակայությամբ, ինչի հետևանքով մեծանում է երկրի խոցելիությունը՝ չնայած ժողովրդի զգալի զանգվածի արևմտամետ ձգտումներին: Լրացուցիչ բարդություններ են առաջացնում էներգետիկ անվտանգության հարցերը, տեղեկատվական պատերազմը և տարածաշրջանային ռազմական լանդշաֆտի փոփոխությունները: Ենթագլխում ներկայացված Իսրայելի Կնեսետի և Հայաստանի Ազգային ժողովի համեմատական վերլուծությունը ցույց է տվել, թե ինչպես են օրենսդիր մարմինները տարբեր քաղաքական համատեքստերում մասնակցում անվտանգային քաղաքականության ձևավորմանն ու վերահսկմանը: Այս համեմատությունը ևս մեկ անգամ ընդգծում է, որ խորհրդարանական համակարգի արդյունավետությունն առավելապես կախված է քաղաքական միջավայրից, գործադիր և օրենսդիր ճյուղերի միջև առկա հավասարակշռությունից, ինչպես նաև ինստիտուցիոնալ հասունության աստիճանից:

Ատենախոսության՝ <<**Խորհրդարանական կառավարման դերն ու նշանակությունը ազգային անվտանգային կայուն զարգացման և ապահովման գործում**>> խորագրով երրորդ գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

<<**ՀՀ խորհրդարանի կազմավորումը և նրա գործունեության առանձնահատկությունները հանրային իշխանության մարմինների գործունեության համատեքստում**>> առաջին ենթագլուխը վերլուծում է Հայաստանում հանրային իշխանության մարմինների զարգացումը՝ սկսած խորհրդային շրջանից, երբ համակարգը հիմնականում հիմնված էր կենտրոնացված կառավարման վրա, ճնշում էր ազգային ինքնավարության դրսևորումները և ձևավորել էր խորապես բյուրոկրատացված գործելակերպ: Ենթագլխում ուսումնասիրվում է, թե ինչպես է խորհրդային վարչաքաղաքական ժառանգությունը շարունակել իր ազդեցությունը անկախ Հայաստանի վրա՝ բարդացնելով անցումը դեպի ժողովրդավարական կառավարման մոդել: Սա արտահայտվել է նախկին ինստիտուցիոնալ կառուցվածքների և վարչական մշակույթի շարունակականության մեջ: Միևնույն ժամանակ, ենթագլխում վերլուծվում են անցումային հիմնական փուլերը, անկախության հռչակումից հետո ձևավորված կիսանախագահական համակարգը, ինչպես նաև պետական ինստիտուցիոնալացմանը խոչընդոտող գործոնները՝ ներառյալ պատերազմը, տնտեսական ճգնաժամերը և քաղաքական անկայունությունը: Վերջին զարգացումները ուսումնասիրվում են 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների համատեքստում, որոնց արդյունքում Հայաստանը

անցում կատարեց խորհրդարանական կառավարման համակարգի՝ նպատակ ունենալով ամրապնդել ժողովրդավարական ինստիտուտները և ապահովել գործադիր իշխանության ավելի հավասարակշռված վերահսկողություն:

<<ՀՀ խորհրդարանական կառավարումը արտակարգ իրավիճակներում քաղաքական կայունության ապահովման համատեքստում (COVID-19 համավարակի և 2020 թվականի պատերազմի օրինակներով)>> երկրորդ ենթագլուխը ուսումնասիրում է խորհրդարանի դերը և նշանակությունը արտակարգ իրավիճակների և ազգային անվտանգությանը սպառնացող խնդիրների պայմաններում՝ կենտրոնանալով գործադիր իշխանության և խորհրդարանական վերահսկողության միջև առկա հավասարակշռության, իսկ հաճախ՝ անհավասարակշռության վրա: Վերլուծությունը ցույց է տալիս, որ ճգնաժամերի ժամանակ իրական իշխանությունը հաճախ կենտրոնանում է գործադիրի ձեռքում՝ ժամանակավորապես նսեմացնելով խորհրդարանի վերահսկող և օրենսդիր գործառույթները: Ուսումնասիրության շրջանակում համեմատվում են խորհրդարանական, կիսանախագահական և գերնախագահական կառավարման մոդելները՝ ուշադրություն դարձնելով դրանց արձագանքման կարողությանը ճգնաժամային իրավիճակներում: Վերլուծվում է, թե որ մոդելներն են առավել արդյունավետ ազգային անվտանգության սպառնալիքներին արագ և համակարգված արձագանքելու տեսանկյունից՝ հաշվի առնելով ինստիտուցիոնալ ճկունությունը, գործադիր իշխանության կենտրոնացման աստիճանը և խորհրդարանական վերահսկողության մեխանիզմների առկայությունը: Ենթագլուխը եզրակացնում է, որ Հայաստանի խորհրդարանական համակարգը, չնայած ֆորմալ ժողովրդավարական առաջընթացին, շարունակում է լիարժեքորեն չիրացնել իր կառավարման ներուժը: Սա վկայում է, որ իրական ժողովրդավարական համախմբումը պայմանավորված է ոչ միայն ինստիտուցիոնալ դիզայնով, այլև պահանջում է հետևողական հանձնառություն թափանցիկության, հաշվետվողականության և քաղաքական մշակույթի խորքային վերափոխման նկատմամբ:

Ատենախոսության **եզրակացությունն»ր** բաժնում ներկայացվել են հետևյալ հիմնական առաջարկությունները և եզրահանգումները՝

1. Հայաստանում խորհրդարանական համակարգը դիտարկվում է ոչ միայն որպես կառավարման մոդելի փոփոխություն, այլ որպես վերադարձ ակունքներին», քանի որ այն ուսումնասիրվում է Անկախության հռչակագրի համատեքստում:

2. Ատենախոսությունը Հայաստանի անցումային ժողովրդավարությունը ուսումնասիրում է լրջագույն անվտանգային սպառնալիքների լայն համատեքստում, թեև խորհրդարանական կառավարման վերաբերյալ գոյություն ունի զգալի գրականություն, անվտանգային հարցերի հետ կապող մասնագիտացված ուսումնասիրությունները, հատկապես 2020 թվականից հետո սակավաթիվ են:

3. Օգտագործելով դեպքի ուսումնասիրության մոտեցումը (case study)՝ ատենախոսության մեջ ներկայացված են օրենսդրական գործընթացների և ինստիտուցիոնալ լեգիտիմության համապարփակ վերլուծություն, այդ կերպ լրացնելով տարածաշրջանային հետազոտությունների ոլորտում առկա զգալի բացը:

4. Աշխատանքում կիրառված է տեսական շրջանակ, որը անմիջականորեն կապում է անվտանգային սպառնալիքները խորհրդարանական կառավարման մոդելի առանձնահատկությունների հետ՝ ուսումնասիրելով, օրինակ, թե ինչպես են անվտանգային ճգնաժամերը ազդում օրենսդրական գործունեության, կոալիցիաների ձևավորման և ներկայացուցչական ինստիտուտների նկատմամբ հանրային վստահության վրա: Չնայած հիմնական ուշադրությունը կենտրոնացած է Հայաստանի վրա, ուսումնասիրության արդյունքները արդիական են նաև այլ երկրների համար, որոնք բախվում են անվտանգային և կառավարման նմանատիպ խնդիրների, ինչպիսիք են Իսրայելը կամ Վրաստանը:

5. Անկախությունից ի վեր Հայաստանի Ազգային ժողովը կենտրոնական դեր է խաղացել ժողովրդավարական կառավարման առաջխաղացման գործում՝ իր գործունեությունը հիմնելով ժողովրդավարական սկզբունքների վրա և աստիճանաբար ամրապնդելով վերահսկողությունը պետական մարմինների նկատմամբ: 2015 թվականի սահմանադրական բարեփոխումները, որոնք իրականացվել են համաժողովրդական հանրաքվեի միջոցով, հանդիսացան ջրբաժան՝ ամրապնդելով իշխանությունների տարանջատման սկզբունքը և ժողովրդավարական արժեքների գերակայությունը՝ անգամ ազգային անվտանգության վերաբերյալ մշտական մտահոգությունների և արտաքին ճնշումների պայմաններում:

6. Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական և կուսակցական համակարգերի զարգացման ըմբռնումը հարստանում է համեմատական մոտեցման կիրառմամբ: Տարբեր երկրների փորձի համադրումը բացահայտում է անկախության և ինքնավարության

զուգահեռ ձգտումները, ինչպես նաև ժողովրդավարական պրակտիկայի ամրապնդման առջև ծառացած ընդհանուր մարտահրավերներ՝ շարունակական անվտանգային սպառնալիքների պայմաններում:

7. Տարածաշրջանում ժամանակակից խորհրդարանական մոդելը« ժողովրդի իշխանության դասական հասկացությունից (ըստ ժողովրդավարության ստուգաբանության) անցել է ինստիտուցիոնալ համակարգերի, որտեղ ժողովրդավարների իշխանությունը, այսինքն՝ ընտրված ներկայացուցիչները, ծառայում են որպես ժողովրդավարական սկզբունքների պահապաններ և ժողովրդի կամքը վերածում են գործողությունների:

8. Գործող սահմանադրական կարգը հստակորեն տարանջատում է ժողովրդի իշխանությունը և պետական իշխանությունը ընդգծելով, որ օրինական պետական իշխանությունը բխում է ժողովրդավարական մանդատներից: Խորհրդարանական գերակայությունը արտահայտում է քաղաքացիների քաղաքական իրավունքների համախմբումը և նպատակ ունի ապահովել, որ պետական մեխանիզմները չգերակշռեն բնակչության քաղաքական կամքի և քաղաքացիական ազատությունների նկատմամբ:

9. Մարդու իրավունքների պաշտպանության առաջնահերթությունը արտացոլում է անհատական ազատությունների և հասարակական կարգի օրինական պահանջների միջև հավասարակշռություն հաստատելու շարունակական ջանքերը, մասնավորապես քաղաքական անկայունության կամ ռազմական հակամարտության պայմաններում: Այս համատեքստում խորհրդարանական մեխանիզմները ծառայում են որպես պաշտպանական պատնեշ՝ պետական հնարավոր միջամտություններից: Նույնիսկ այն դեպքում, երբ անհրաժեշտ է ռազմական դրություն կամ այլ արտակարգ միջոցառումներ պետության ներսում, իրավական դրույթները պահանջում են, որ իրավունքների ցանկացած սահմանափակում լինի հստակ սահմանված, խստորեն համաչափ սպառնալիքին և իրականացվի խորհրդարանական ուժեղ վերահսկողության ներքո՝ համաձայն մարդու իրավունքների միջազգային չափանիշների:

10. Անվտանգային ընթացիկ մարտահրավերները, ինչպիսին է թուրք-ադրբեջանական դաշինքի կողմից ռազմական գործողությունների հնարավոր վերսկսումը ընդգծում են խորհրդարանական կայուն գործելակերպի, ինչպես նաև կոլեկտիվ ու անհատական իրավունքների օրենսդրական պաշտպանության շարունակական հարմարեցման անհրաժեշտությունը:

11. Պետական պաշտոնյաների և հասարակ քաղաքացիների կողմից քաղաքական իրավունքների խախտումների միջև պատշաճ տարբերակումը կարևոր է: Պաշտոնյաների կողմից իշխանության չարաշահման ավելի խիստ պատժամիջոցներն ամրապնդում են խորհրդարանական ժողովրդավարություններից ակնկալվող հաշվետվողականությունը և վարքականոնների պահպանությունը:

Այս համատեքստում անհրաժեշտ է արձանագրել հետևյալը՝

- Զարգացող ժողովրդավարական երկրներում խորհրդարանական համակարգի ներդրումը կարող է հանգեցնել գործադիր և օրենսդիր իշխանությունների ճյուղերի միավորման վտանգի, ինչը հնարավոր է խաթարի իշխանությունների տարանջատման սկզբունքը:
- Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական կառավարման մոդելի հաստատումը դիտվում է ոչ միայն որպես կառավարման նոր մոդելի կիրառում, այլև որպես վերադարձ ակունքներին:
- 2015 թվականի սահմանադրական բարեփոխումներից հետո անցումը խորհրդարանական կառավարն մոդելի կարևորագույն ինստիտուցիոնալ տեղաշարժ էր, որը միտված է ժողովրդավարական կառավարումը ամրապնդելուն: Սակայն այս փոխակերպումը տեղի է ունեցել անվտանգության ոլորտում մշտական և բարդ մարտահրավերների համատեքստում, որոնք անմիջականորեն ազդել են խորհրդարանական զարգացման ընթացքի և արդյունավետության վրա:
- Հայաստանի կառավարման մոդելի ցանկացած փոփոխություն պետք է դիտվի հիբրիդային և տեղեկատվական պատերազմի, տարածաշրջանային շարունակական անկայունության, ինչպես նաև պետության բազմակողմանի ճգնաժամերին դիմակայելու ունակության ընդլայնված համատեքստում:
- Հայաստանի խորհրդարանական վերահսկողության շրջանակները ազգային անվտանգության ոլորտում դեռևս բավարար զարգացած չեն, հատկապես թափանցիկության, հաշվետվողականության և պաշտպանության ոլորտում քաղաքացիական վերահսկողության առումով: Անվտանգության կառավարման գործում օրենսդիր մարմնի ազդեցությունը ամրապնդելու նպատակով անհրաժեշտ են համապարփակ կառուցվածքային բարեփոխումներ և ընթացակարգային նորարարություններ:
- Հանրային վստահությունն ու հասարակական ընկալումները կարևոր դեր են խաղում Հայաստանի խորհրդարանական

ինստիտուտների օրինականության և գործառնական կարողությունների ձևավորման հարցում, հատկապես ճգնաժամային պայմաններում: 2018 թվականի թավշյա հեղափոխությունը ընդգծեց մասնակցային կառավարման նկատմամբ հանրային պահանջարկի աճը, սակայն այս թափը պահպանելու համար անհրաժեշտ է ավելի խորը ինստիտուցիոնալ ներգրավվածություն և ավելի մեծ արձագանքունակություն:

- Քաղաքագիտության բազմազան տեսությունների, այդ թվում՝ ռացիոնալ ընտրության, բազմակարծության, էլիտաների և համակարգերի տեսությունների կիրառումը ապահովում է ամուր վերլուծական հիմք՝ ուսումնասիրելու համար անվտանգային խնդիրներին առնչվող իրադարձությունների և կառավարման ձևավորման գործընթացում խորհրդարանականների, քաղաքական էլիտաների և միջազգային դերակատարների փոխազդեցության դինամիկան:
- Ատենախոսությունը փաստում է, որ անվտանգության մարտահրավերները կարող են հանդիսանալ հարմարվողական ինստիտուցիոնալ նորարարությունների կատալիզատոր՝ խթանելով Հայաստանի խորհրդարանի ռազմավարական բարեփոխումները, միջխորհրդարանական դիվանագիտությունը և հասարակության ակտիվ ներգրավվածությունը: Այդ զարգացումները ամրապնդում են ժողովրդավարության դիմադրողականությունը աշխարհաքաղաքականորեն խոցելի այս պետությունում:
- Այս հետազոտությունից բխող առաջարկությունները ընդգծում են կառավարման հիբրիդային մոդելների կիրառման, կոալիցիաների կառուցման մեխանիզմների բարելավման, օրենսդրական թափանցիկության բարձրացման և խորհրդարանական ինստիտուտների ու քաղաքացիական հասարակության միջև ավելի ամուր փոխգործակցության անհրաժեշտությունը՝ համապատասխան միջազգային չափանիշներին, ինչպիսիք են ԵՄ-ՀՀ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (CEPA) և ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների 16-րդ կետը (SDG 16):

Հենվելով ատենախոսության եզրակացությունների վրա՝ ներկայացնում ենք հետեվյալ կիրառական առաջարկությունները.

1. Զարգացող երկրներում խորհրդարանական կառավարման մոդելի ներդրումը կարող է պարունակել գործադիր և օրենսդիր իշխանության ճյուղերի միավորման կամ անհամաչափ փոխազդեցության ռիսկեր:

2. Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական կառավարման ներդրումը չի դիտարկվում որպես կառավարման նոր ձև, այլ՝ որպես« վերադարձ արմատներին»:

3. 2015 թվականի սահմանադրական բարեփոխումներից հետո Հայաստանի անցումը խորհրդարանական հանրապետության ներկայացնում է կարևոր ինստիտուցիոնալ վերափոխում, որն ուղղված է ժողովրդավարական կառավարման համակարգի ամրապնդմանը: Սակայն այս վերափոխումը տեղի է ունեցել մշտական և փոփոխվող անվտանգային սպառնալիքների համատեքստում, որոնք ազդել են խորհրդարանական զարգացման բնույթի և արդյունավետության վրա:

4. Ինստիտուցիոնալիզմը օգտակար տեսական շրջանակ է առաջարկում Հայաստանում խորհրդարանական կառավարման զարգացման գործընթացը վերլուծելու համար և պարզաբանում է խորհրդանշական սովորույթների և գործառնական հարմարվողականության միջև առկա երկատվածությունը:

5. Կառավարման մոդելի փոփոխությունն անհրաժեշտ է դիտարկել հիմնականում հիբրիդային և տեղեկատվական պատերազմների, տարածաշրջանային անկայունության, ինչպես նաև պետության՝ բազմաբնույթ ճգնաժամերին արձագանքելու ինստիտուցիոնալ կարողության համատեքստում:

6. Հայաստանում խորհրդարանական վերահսկողական մեխանիզմները շարունակում են մնալ թերզարգացած՝ ազգային անվտանգության ոլորտում, հատկապես՝ թափանցիկության, հաշվետվողականության և պաշտպանության ոլորտում քաղաքացիական վերահսկողության առումով: Անվտանգային հարցերի կառավարման գործում օրենսդիր իշխանության դերի ամրապնդման համար անհրաժեշտ են կառուցվածքային բարեփոխումներ և ընթացակարգային նորարարություններ:

7. Հանրային վստահությունը և ընկալումները զգալիորեն ազդում են Հայաստանում խորհրդարանական ինստիտուտների օրինականության և գործունակության վրա, հատկապես ճգնաժամերի ժամանակ: 2018 թվականի հեղափոխությունը ցույց տվեց կառավարմանը ժողովրդի մասնակցության աճող սպասումները, սակայն այս դինամիկայի պահպանման համար անհրաժեշտ է ավելի խորը ինստիտուցիոնալ ներգրավվածություն և արձագանքողականություն:

8. Բազմաթիվ քաղաքական տեսություններ, այդ թվում՝ ռացիոնալ ընտրության տեսության, բազմակարծության, էլիտաների և համակարգերի տեսությունների կիրառումը ապահովում են

համապարփակ վերլուծական շրջանակ՝ գնահատելու անվտանգության իրավունքի և կառավարման ձևավորման գործընթացում խորհրդարանականների, քաղաքական էլիտաների և միջազգային գործիչների միջև փոխազդեցության դինամիկան:

9. Ատենախոսությունը առաջ է քաշում այն հիմնադրույթը, որ անվտանգային մարտահրավերները կարող են ծառայել որպես հարմարվողական ինստիտուցիոնալ փոփոխությունների կատալիզատոր՝ խթանելով Հայաստանի խորհրդարանի զարգացումը ռազմավարական բարեփոխումների, միջխորհրդարանական դիվանագիտության և հասարակության հետ փոխգործակցության միջոցով: Այս զարգացումը, իր հերթին, նպաստում է ժողովրդավարական դիմադրողականություն ամրապնդմանն աշխարհաքաղաքական առումով խոցելի պետությունում:

10. Ուսումնասիրությունից բխող առաջարկությունները ընդգծում են հիբրիդային կառավարման մոդելների կիրառման, կոալիցիաների կառուցման արդյունավետության բարելավման, օրենսդրական գործունեության թափանցիկության բարձրացման և խորհրդարանական ինստիտուտների ու քաղաքացիական հասարակության միջև ավելի ամուր կապերի անհրաժեշտությունը՝ համապատասխան միջազգային շրջանակներին, ինչպիսիք են ԵՄ-ՀՀ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (CEPA) և ՄԱԿ-ի կայուն զարգացման 16-րդ նպատակը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում

1. **Simonyan, T.** (2025). The Status and Peculiarities of the Activities of Public Authorities in the Context of Parliamentary Governance. Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia 1(118). P.p. 213-223.
2. **Simonyan, T.** (2024). Parliamentary Administration as an Object of Comparative Legal-Political Research. Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia 4(116). P.p. 146-162.
3. **Simonyan, T.** (2025). Political and Legal Analysis of Evolving Mandates and Their Impact. Bulletin of the Russian-Armenian University N. 1, Humanitarian and Social Sciences 1829-0450. P.p. 60-73.

4. **Sargsyan, H., Simonyan, T.** (2023). Unraveling of Judicial Reforms in the State of Israel: Assessing the Impact on Independence and Power Dynamics. Bulletin of the Russian-Armenian University N. 4, Humanitarian and Social Sciences 1829-0450. P.p. 52-63.

5. **Simonyan, T.** (2024). Political and Legal Analysis of UN Peacekeepers' Mandate in the Central African Republic. Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia 2(114). P.p. 192-204.

6. **Simonyan, T.** (2025) Legal-Historical and Legal-Political Prerequisites of the Formation of Parliaments "European University" Collection of Scientific Articles 16(01). P.p. 117-126.

7. **Simonyan, T.** (2025). On Several Key Methodological Issues of Parliamentary Governance. Scientific journal crisis management and technologies 1(26). P.p. 43-56.

Симонян Тигран Каренович

ОСНОВНЫЕ ВОПРОСЫ РАЗВИТИЯ ПАРЛАМЕНТСКОГО ПРАВЛЕНИЯ В КОНТЕКСТЕ ВЫЗОВОВ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Диссертация на соискание учёной степени кандидата политических наук
по специальности 23.00.02 “Политические институты и процессы”.
Защита состоится 05-го ноября 2025 года, в 14:30 часов на заседании действующего в ЕГУ специализированного совета 056 “Политология и международные отношения”, МОНКС КВОН РА (адрес: РА, г. Ереван 0025, Алека Манукяна, 1).

РЕЗЮМЕ

Целью данной диссертационной работы является исследование роли парламента и парламентского правления как ключевых факторов устойчивого развития. Свободные и демократические выборы остаются фундаментальными в формировании политических процессов, а парламент отражает эволюцию представительных систем от их зарождения в Древней Греции и Риме до современных демократий.

Во введении обосновывается актуальность темы исследования, цели и задачи диссертации, объект и предмет исследования, а также научная новизна и возможные направления её теоретического и практического применения.

Структура и объем диссертации. Диссертация состоит из введения, трех глав, восьми подглав, заключения и списка литературы. Общий объем текста кандидатской диссертации, включая список литературы, составляет 108 страниц.

В первой главе диссертации, озаглавленной **«Парламентское правление как объект сравнительной политической науки»,** которая состоит из четырех подразделов, проводится анализ и сравнение парламентских систем в разные исторические периоды. В частности, указывается эффективность парламентского правления, представляющую собой многомерную задачу, формируемую сложными историческими, структурными и контекстуальными факторами. Эволюция парламентских систем,

от Афинского собрания и Римского сената через Английскую и Французскую революции к современным конституционным моделям — всегда была сосредоточена на поиске баланса между исполнительной властью и принципами представительства, ответственности и соблюдения закона. Современные парламенты выполняют не только законодательные функции, но и служат форумом для общественных дебатов и механизмом подотчетности исполнительной власти, При этом СМИ и общественное мнение играют ключевую роль в формировании парламентской повестки и восприятия легитимности.

Вторая глава диссертации под названием **«Роль парламента в контексте вызовов национальной безопасности»** посвящена изучению опыта Армении в период перехода от советской централизованной системы управления к парламентской. Этот переход не обеспечил достаточной эффективности в управлении кризисами и осуществлении контроля, особенно в условиях национальных чрезвычайных ситуаций, таких как пандемия COVID-19 и Вторая Карабахская война 2020 года. Несмотря на появление надежд на реформы в постреволюционный период в Армении, сохраняются проблемы, связанные с коррупцией, фрагментацией и неспособностью превратить демократические институты в полноценные механизмы практического руководства и контоля.

Третья глава диссертационной работы **«Роль и значение парламентского правления в устойчивом развитии и обеспечении национальной безопасности»** посвящена анализу и сравнению опыта Армении, Израиля и Грузии. Указывается, что успех парламентских систем зависит от зрелости институтов, их адаптивности и интеграции законодательных и исполнительных функций, что позволяет быстрее и эффективнее реагировать на кризисы. Таким образом, армянский опыт свидетельствует, что простое перенятье парламентских структур недостаточно; для достижения эффективного демократического правления необходимы последовательное укрепление институтов, развитие межпартийного диалога и постепенное преодоление неформальных сетей.

В заключении представлены основные результаты исследования, подводятся итоги и даются некоторые рекомендации.

Tigran Karen Simonyan

ISSUES OF PARLIAMENTARY GOVERNANCE DEVELOPMENT IN THE CONTEXT OF NATIONAL SECURITY CHALLENGES USING THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA

Dissertation under 23.00.02 "Political Institutions and Processes," aspiring to earn Ph.D. in Political Sciences. The defense of the dissertation will take place on November 5, 2025 at 14:30 at the Specialized Council 056 "Political Sciences and International Relations" of the RA MOESCS HESC, operating at Yerevan State University
(Address: RA, Yerevan, 0025, 1 Alek Manoogian).

SUMMARY

The aim of this dissertation is to examine the role of parliament and parliamentary governance as key drivers of sustainable development. Free and democratic elections remain fundamental in shaping political processes, while parliament reflects the evolution of representative systems from ancient Greece and Rome to modern democracies.

The introduction substantiates the relevance of the research topic, the goals and objectives of the dissertation, the object and subject of the research, as well as the scientific novelty and possible directions of its theoretical and practical application.

Structure and length of the dissertation. The dissertation consists of an introduction, three chapters, eight subchapters, a conclusion, and a bibliography. The total length of the candidate's dissertation, including the bibliography, is 108 pages.

The first chapter of the dissertation, entitled **"Parliamentary Government as an Object of Comparative Political Science"**, which consists of four subsections, analyzes and compares parliamentary systems across different historical periods. Specifically, it examines the effectiveness of parliamentary governance, which is a multidimensional challenge shaped by complex historical, structural, and contextual factors. The evolution of parliamentary

systems, from the Athenian Assembly and the Roman Senate through the English and French Revolutions to modern constitutional models, has always focused on finding a balance between executive power and the principles of representation, accountability, and respect for the law. Modern parliaments not only perform legislative functions but also serve as a forum for public debate and a mechanism for executive accountability. At the same time, the media and public opinion play a key role in shaping the parliamentary agenda and perceptions of legitimacy.

The second chapter of the dissertation, entitled "**The Role of Parliament in the Context of National Security Challenges**", examines Armenia's experience during the transition from the Soviet-era centralized system of governance to a parliamentary. This transition has failed to ensure sufficient effectiveness in crisis management and oversight, particularly during national emergencies such as the COVID-19 pandemic and the Second Karabakh War of 2020. Despite the emergence of hopes for reform in Armenia's post-revolutionary period, problems related to corruption, fragmentation, and the failure to transform democratic institutions into fully functional mechanisms of practical guidance and oversight remain.

The third chapter of the dissertation, "**The Role and Significance of Parliamentary Governance in Sustainable Development and Ensuring National Security**", analyzes and compares the experiences of Armenia, Israel, and Georgia. It is argued that the success of parliamentary systems depends on the maturity of institutions, their adaptability, and the integration of legislative and executive functions, which enables a more rapid and effective response to crises. Thus, the Armenian experience demonstrates that simply adopting parliamentary system is insufficient; achieving effective democratic governance requires consistently strengthening institutions, developing interparty dialogue, and gradually overcoming informal networks.

The conclusion, presents the main results of the study, summarizes the findings and provides some recommendations.